

ՄԱՆՈՒԿՆԵՐԻ ՄԱՐՍՈՂՈՒԹԵԱՆ ԳՈՐԾԱՐԱՆՆԵՐԻ ՄԻ ՁԱՆԻ ՔԻՒԱՆ-  
ԴՈՒԹԻՒՆՆԵՐԸ:

ԲԺՇկ. Պ.Պ. Գ.Ա.Ս. Տէ՛ր-Գ.Պ.Ի.Դ.Ո.Բ.Ա.Ն.Ց (Աղաբեկի)

(Շաբունակութիւն և վերջ<sup>1)</sup>)

ԲԱՐԱԿ ԱՊ.Ի.ԲՆՆԵՐԻ ՑԱՆԿԱՐԾԱՀԱՍ ԿԱՏԱՐ (Հարինք):

Այս կատարի գլխաւոր յատկութիւնը այն է, որ կղկղանքը մեծ քանակութիւնով է դուրս գալիս, լինում հեղուկ, ջրալի. սկիզբը մուք դոյն ունի, յետոց կանանչաւուն զեղին, վերջապէս անդոյն, ինչպէս ջուր: Կերակուր ընդունելուց մի փոքր յետոց սկսում է խիթքը (շանջռան) և ապա ձայնով և ուժզնութիւնով, ինչպէս խցանը հանած տակառից, դուրս է խփում կղկղանքը: Հիւանդը սաստիկ ծարւ ունի, մէզի քանակութիւնը շատ փոքր է: Հիւանդութիւնը ըստ մեծի մասին յառաջ է գալիս միևնոցն պատճառներից, որոնցից յառաջ է գալիս դիաղելսին, ուստի, հիւանդութեան առաջն առնելու համար, հարկաւոր է այն կանոնները ճիշդ պահել, որոնց մասին արդին խօսեցինք: Եթէ հիւանդութեան պատճառը ծծից կտրելն է, խիոյն պէտք է ծծմացը գտնել. այս կը լինի ամենալաւ բժշկութիւնը և գեղորակքը աւելորդ են: Եսկ եթէ ծծմացը գտնել չէ կարելի, այն ժամանակ մի քանի օր պէտք է կովի կաթը անպատճառ թողնել և ոչ մի կերպ չը գործածել, այլ նորա փոխանակ տալ արարական խէժի (Գումար արտէնէնում) ջուր, որը պատրաստում են

1) Տե՛ս «Մուլճ»-ի 9-ըդ համարը:

այսպէս: — Վեր են առնում մէկ բաժակ եփ տւած և սառցրած ջուր և մէջը տրորում են կէս կամ մէկ թէցի գդալ արաբական խէժի փոշին այնքան՝ մինչև որ լուծւի: Կամ տալ ձւի սպիտակուցի ջուր ոռով՝ մէկ կամ երկու թէցի գդալ ոռու մէկ թէցի բաժակ հեղուկի հետ, կաղնիի պաղի սուրճ, սովորական թէցի կամ վարսակի շողիաւոր ջուր: Այս բոլորը պէտք է տալ անպատճառ առանց կաթի: Երբ կղկղանքը կը թանձրանայ և աւելի ներկած գոյն կը ստանայ, ծարաւը կը պակաւոր է փոքր առ փոքր յիշեալ հեղուկների հետ կաթ խառնել, պահպանելով վերը յիշած կանոնները: Մարաւի վերայ հարկաւոր է մեծ ուշադրութիւն դարձնել, վասն զի հիւանդը շատ հեղուկ է կորցնում կղկղանքի միջոցով, արիւնը սկսում է թանձրանալ. վերջինս կարող է շատ տիսուր հետեանք ունենալ: Մի անգամից շատ չը պէտք է խմացնել, որովհետեւ եթէ հիւանդութեան պատճառը ծծից կտրելն է, այն ժամանակ շատ հեշտութիւնով կարող է երեխաների խօլերա յառաջ գալ: Պէտք է թէցի գդալով ոռմի ջուր տալ, մէկ կամ երկու թէցի գդալ ոռու խառնել մէկ թէցի բաժակ սառը ջրի հետ կամ ածել մէկ թէցի բաժակի մէջ սօղայի ջուր, կէս ժամ թողնել, որ կանգնի, ապա խառնել նորա մէջ մէկ կամ երկու թէցի գդալ կոնեակ. այդ խառնուրդների մէկից երբեմն երբեմն թէցի գդալով տալ հիւանդին: Եթէ երեխայի երեսը սկսում է սուր կերպարանք ստանալ, գաղտունը (Քննապահել) փոս է ընկնում, ձեռքերը և ոտքերը ստուգում են, այն ժամանակ ոռու կամ կոնեալը աւելի պէտք է վեր առնել: Հիւանդի փորին՝ հէնց հիւանդութեան սկզբից հարկաւոր է տաքացնող կոմպրեսներ զնել. այն է, վեր առնել մի կտոր կտաւ, չորս ծալել, սառը ջրում թաց անել, ապա լաւ քամել, փռել երեխայի բոլոր փորի վերայ, նորա վերայ փռել մոմած կտաւ, սորա վերայ մի կտոր ֆլանել և ապա այդ ամենը փորի վերայ պնդացնել մի լայն երեսարբիչով: Երեք ժամը մի անգամ հարկաւոր է թաց կտաւը նորոգել, այսինքն՝ նորից թաց անել, քամել և յետոյ փորին կապել: Մոմած կտաւը և ֆլանելը ամեն կողմից պէտք է լայն լինեն թաց կտաւից:

## ԲԱՐԱԿ ԱՊԻՔՆԵՐԻ ԵՐԿԱՐՍՏԵՒ ԿԱՏԱՐ:

Այս հիւանդութիւնը յառաջ է զալիս բարակ աղիքների յանկարծահաս կատարի մի քանի անգամ կրկնելուց կամ երկար ժամանակ տևելուց և սովորաբար այդ մանուկները միենոցն ժամանակ խոզակառով (սէրչուլուլ) հիւանդ են կամ արդէն ոսկրակակղութիւն (ստիլիֆիս) ունեն: Հիւանդութիւնը, բայ մեծի մասին, տարածում է նաև հաստ աղիքների վերաց (սորա մասին յետոյ): Փորի մորթը փայլ է ստանում, փորը փքում է, փքած աղիքների գծագրութիւնը պարզ երեւում է և կարելի է ճեռքով շօշափել: Կղկանքը ջրալի է, սարսափելի հոռ ունի, երեխան արտավիժում է սաստիկ ցաւեր զգալով կարճ ժամանակամիջոցում մի քանի անգամ միմեանց ետելց և ապա մի քանի ժամ հանգստանում է: Այս երեխաները սովորաբար շատ նիշարում են, սակաւարին են զառնում, նոցա երեսի մորթը ծերերի պէս ծալծլում է ինչպէս կնծիռներ: Այստեղ ամենից առաջ, ինչպէս համբընթաց զիսպեսսիի ժամանակ, որչափ կարելի է, իխատ պէտք է լինել կերակրելիս, այն է փոքր քանակութիւնով որոշեալ ժամանակամիջոցներում: Այդ հիւանդների վերաբերութեամբ մանաւանդ պէտք է իխատ լինել, որովհետեւ տքասաստիկ քաղց են՝ զգում և աղահաբար ահագին քանակութիւնով հայ կամ այլ ալիւրեղէն կերակուրներ են կուլ տալիս՝ վնասելով իրանց մարտութեան հիւանդ գործարաններին: Եթէ մացը չի կարող ծիծ տալ և ծծմացը գոնելը գժւար է, այն ժամանակ պէտք է կովի կամ այծի լաւ կաթ դտնել: Առաջ պէտք է եփ տալ, ապա սառցնել և այնպէս ուտեցնել: Երեք հացի զգալ կաթ, երկու հացի գդալ եփած ջուր, մի հացի գդալ կրի ջուր (որը ամեն գեղանոցում կարելի է ստանալ և անուանում է աքւա կալիցիս): Այս քանակութիւնը հարկաւոր է երկու ժամը մի անգամ տալ կամ սորա կէսը՝ մի ժամը մի անգամ: Եթէ երեխան ծարաւ ունի, հարկաւոր է փոքր քանակութիւնով (թէլի գդալով) երբեմն երբեմն ջրախառն գինի տալ: Եթէ կաթը վնասում է, հարկաւոր է շնուկ տալ, որը պէտք է պատրաստել տրօխիսցի սերիպարի ալումինատի միջոցավ: Վեր են առնում սորա մի հատը և մէկ ու կէս թէլի բաժակ եռացող կաթի մէջ լուծում են, պանիրը տակը նստելուց յետոյ քա-

մում են, սառցնում են և հեղուկը տալիս են երեխային։ Ոչ մի կերպ ալիւրեղէն չէ կարելի տալ երեխային, ոչ եզիստացորեանի (սիմինդրի) ալիւր (մօնդամին), ոչ արրօւրուտ և ոչ լեղումինաւոր։ Աւելի շուտով կարելի է փորձել շիշի մեջ եփած տաւարի մսի արգանակը։ Երբեմն օգտաւէտ է լինում փորին թաց կոմպրեմեր կապելը, որոնք չորս ժամը մի անգամ՝ պէտք է փոխել։

ՀԱՅ ԱԴԻՔՆԵՐԻ ՅԱՆԿԱՐԾԱՀԱՍ ԵՒ ԵՐԿԱՐԾԵՒ ԲՈՐԲՈՔՈՒՄՆ։

Այս հիւանդութիւնը զլիսաւորապէս հաստ աղիքների մէջն է։ Յանկարծահաս ձեւը երեւան է գալիս միանդամից, կարծես թէ առանց պատճառի։ Յանկարծ մեծ տաքութիւն, խիթք, արիւնախառն շողիաւոր կղկղանք և սասախիկ նքոց — այս է հիւանդութեան սկիզբը և կարող է մի քանի օրում մահով վերջանալ։ Կամ երեխան կարող է առողջանալ, այն է՝ նա աւելի և աւելի ուշ է արտավիժում, արիւնը և շողին կղկղանքի մէջ կամաց կամաց պակասում են, կը կղկղանքի գոյնը և խոտութիւնը դառնում են բնական։ Նրբեմն այս հիւանդութիւնը յառաջ է գալիս երկարատե զիսպեպսիից կամ քարակ աղիքների երկարատե կատարից, երբ հիւանդը ջրալի կղկղանքի փոխանակ աւելի և աւելի շողի է արտավիժում։ Երեխան արտավիժելուց առաջ անհանդիսա է, յանկարծ դունատում է, կարծես թէ յաւերից հոգին տալիս է և արտավիժածը միայն շողիի կտորներ են և այն էլ փոքր քանակութիւնով։ Կղկղանքը սկզբում անհոտ է լինում, իսկ մի քանի օրից յետոց սկսում է սասախիկ հոտունենալ, բայց հեար միշտ փոքր քանակութիւնով արիւն կայ խառնած և երբեմն թարախ և այլ թաղանթի նման կտորներ։ Այս երկրորդ ձեւը շատ անդամ տաքութիւն չ'ունի։

Յետոյքի շուրջը, ազդրները, կրունկները կղկղանքի կծուութիւնից վէրքեր են կրում իրանց վերայ, փորը տափականումէ, մորթը գունատ և թառամած է լինում, առանց առաձգականութեան։ Եթէ շատ ժամանակ չէ, որ երեխային ծծից կորել են, իսկոն հարկաւոր է ծծի տալ, ապա թէ ոչ, ոչ մի կենդանու կաթը՝ ոչ կովինը, ոչ այծինը՝ այդ հիւանդները չեն կարողանում մարսել։ Խոչ կուզեն կենդանու կաթի հետ խառնեն, միւնոցն է, հիւանդները չեն մար-

սում: Այդ իսկ պատճառով, հարկաւոր է վերը լիշած կերակուրներին զիմնը:—Սրաբական խեժի ջուր, վարսակի շողի, սովորական թէյ, կաղնիի սուրճ: Խակ յետոց փոքր առ փոքր հարկաւոր է սկսել կաթ խառնել: Այս հիւանդութեան մէջ ամենից օգտաւէտ է նեստլէի երեխաների ալիւրը: Առաջ վեր են առնում մի հացի գլաւ ալիւր և բննը հացի գլաւ ջուր, մի քանի ժամանակից յետոց, երբ երեխացի կղկղանքը առելի լաւ կերպարանք է ստանում, սկսում են կաթ ևս խառնել, զրոյինակ՝ մի մասը ալիւր, եօթը մասը ջուր և երեք մասը լաւ կաթ, յետոց ժամանակով մի մասը ալիւր, հինգ մասը ջուր և հինգ մասը կաթն և վերջապէս կարելի է ալիւրը ուղղակի կաթնով եփել: Երեխացի թուլութեան (նուազութեան) առաջն առնելու համար հարկաւոր է տալ ռոմի կամ կոնեակի ջուր կամ նոցա վարսակի շողիի հետ խառնել և այնպէս տալ: Երկու թէյի գլաւից մինչեւ չորս թէյի գլաւ վեր են առնում ռոմ կամ կոնեակ և խառնում են մի թաս լիքը վարսակի շողիի հետ և այդ քանակութիւնը մի օրւաց մէջ խմացնում են:

### Դ Ի Զ Ե Ն Տ Ե Ր Ի:

Այս հիւանդութիւնը սկսում է յանկարծ, մինչդեռ երեխացը սրբանից առաջ փորկապութիւն ունէին:—Տաքութիւն, փորացաւ, սաստիկ լիթք, նքոց և արտավիժումն: Հիւանդը սկզբում միմեանց ետելից շուտ շուտէ արտավիժում, բայց փոքր քանակութիւնով: Կղկղանքը շողիի, գողողի պէս է, ապակիի նմանութիւն ունի և միմեանց կպած կտորներից է՝ բաղկացած, գիշերւայ անօթի մէջ կամ սաւանի վերաց գողգողում է: Երեխան իւրաքանչիւր անդամ արտավիժելու համար շատ ժամանակ է գործ գնում: Նուատով կղկղանքը փոխում է, շողիաւոր կատրների հետ խառնած են արիւնախառն մուք-կանաչ կրցեր, որոնք, եթէ արիւնը շատ է լինում, ինչպէս գորշ-կարմիր կտորներ են երեւում, ջարդած մաի նմանութիւն ունին: Մորթը սաստիկ գունատում է, երեխան սաստիկ նիշարում է և կերակուրից հրաժարւում, մարմինը սառչում է և զօրութիւնը պակասում: Երբեմն երկրորդ օրից կղկղանքը փոխում է, արտավիժածը շողեաց թաղանթի խոշոր և միմեանց հետ կպած կտոր-

ներից է բաղկացած, սորանից յետով սաստիկ նքոցով դուրս են զալիս արիւնախառն շողիի կտորներ: Նատ քիչ անգամ պատահում է, որ եթէ հիւանդութիւնը երկարատև է լինում, կղկղանքը աւելի թարախ պարունակող կտորներիցն է բաղկացած, որոնց հետ խառն են չափաւոր քանակութիւնով թաղանթի կտորներ, առանց նքոցի են դուրս գալիս, իսկ ինքը կղկղանքը սարսափելի հոտ ունի: Այս հիւանդները արագութեամբ նիշարում են, կապտում, նոցա արիւնը թանձրանում է կամ վախճանում են կամ հիւանդութիւնը երբեմն դէպի լաւն է գնում, երբեմն դէպի վատը, նոքա կենդանի են մնում, բայց ոչ առողջացած:

Ամենից առաջ հիւանդի շուրջը խիստ մաքրութիւն պէտք է պահել: Ծծի երեխաններին օրը երեք անգամ, իսկ մեծերին օրը երկու անգամ լողարանի մէջ պէտք է լւանալ  $27^{\circ}-28^{\circ}$  Բ. Հնդից մինչև տասն րոպէ տեղորութիւնով, աւելի սառը ծուրը սաստիկ զնասում է այս հիւանդներին. լացքը, գիշերւաց անօթը, կղկղանքը՝ իսկոյն սենեակից պէտք է հեռացնել և եռացող ջրով լւանալ: Հաստատուն կերակուր (հաց, միս) մինչև անգամ հասակաւոր երեխաններին չը պէտք է տալ: Կաթը կը ի հետ կամ կաղնիի սուրճի հետ խառն, սովորական թէկ գաղջ, եթէ երեխան թողլ է, մի քիչ ոռմով. մեծ երեխաններին սագո գինով շինած, մսի արգանակ շլշի մէջ պատրաստած՝ հացի գլանով—ահա սոքա են հիւանդների իսկական կերակուրները: Թաց կոմպրեսներ նոյնպէս կարելի է գործ ածել, բացց աւելի լաւ է հիւանդի փորը փաթաթել տաքացրած չոր ասուեղէն կամ բրդեղէն շորերով. սոքա երեխաններին շաա դուրեկան են, ցաւերը ամոքում են և հանգստացնում:

## ԵՐԵԽԱՆՆԵՐԻ ԽՈԼԵՐԱ:

Երեխանների խօլերան կամ յառաջ է գալիս աղիքների վերը ցիշած հիւանդութիւնների մէկից կամ բոլորովին առողջ երեխան սկսում է արտավիժել ահազին քանակութիւնով անգոյն կղկղանք, միևնոյն ժամանակ մէկ մէկու ետևից փսխել, տաքութիւնը և ծարաւը ահազին են, շուառվ հիւանդը գօրութիւնից լնկնում է, զաղտունը փսս է ընկնում, զլսի ոսկորները իրանց դրութիւնը փոխում են,

երեսը քաշում է, մորթը կապում, շնչառութիւնը սառչում է և գծւարանում։ Այդ իսկ պատճառով հարկաւոր է շտափել երեխային օղնութիւն հասցնել։ Ամենից առաջ պէտք է դադարել երեխային կերակրուր ապահով, մինչև անդամ մօր կամ ծծմօր կաթը չը տալ, քանի որ երեխան փախում է և փորլուծութիւն ունի։ Երեխային հարկաւոր է օրը երեք անգամ լողացնել 28<sup>0</sup>—32<sup>0</sup> ։ տաքութիւն ունեցող ջրի մէջ, լողացնելու ջրի մէջ խառնում են մանանեխի հիւթ։ վեր են առնում երեք հացի զբալ մանանեխ, կապում են անձեռոցի մէջ, կապածը թաթախում են սառը ջրի մէջ և քամում են լողարանի մէջ, այնքան անգամ թաց են անում և քամում, մինչև դուրս եկող ջուրը այլ ևս գեղին դոյն չ'ունենայ։ Երեխային պահում են լողարանի մէջ 5—15 րոպէ։ Լողարանից հանելուց յետոյ երեխայի մարմինը չոր շորով ցամաքեցնում են՝ շիելով, և ապա փաթաթում են ֆլանելի կամ բրդի վերմակի մէջ։ Հարկաւոր է երեխայի ծարաւը ամոքել, բայց ոչ գինով, որովհետեւ գինին երբեմն փախելը աստիքացնում է, այլ սօդացի ջուրը ածում են մի թէյի բաժակի մէջ և աւելացնում են նորա վերաց մէկ կամ երկու թէյի զբալ կոնեակ, թողնում են մի քանի ժամանակ և ապա ամեն տասն րոպէին տալիս են երեխային մէկ թէյի զբալ։ Սօդացի ջրի փոխանակ կարելի է վեր առնել սովորական սառը թէյ կամ սև սուրճ նոյնպէս սառը և երկուսն էլ կոնեակի հետ խառնած կամ ձևի սպիտակուցի ջուր՝ նոյնպէս կոնեակով։ Կոնեակի փոխանակ կարելի է ուժ վեր առնել։ իսկ եթէ սառուց կայ, կարելի է մանր կտորներ կամ առանձին տալ երեխային, որ կուլ տայ կամ նոյն իսկ ըմպելիքների հետ խառն։ Ի՞ց ոչ մի կերպով ոչ մէկ կերակուր չը տալ, ոչ շողիաւոր հեղուկ, ոչ ծծի կաթ և ոչ այլ ինչ, քանի երեխան շարունակում է փախել և լուծել։ Իսկ երբ կը տեսնենք, որ երեխան ամբողջ մի օր էլ չի փախում և լուծում, այն ժամանակ հարկաւոր է սկսել կամ ծիծ տալ կամ կաթի խառնուրդ, վերջինս սառցի վերաց սառցրած՝ համեմատ այն կանոններին, որոնց մասին արդէն խօսած ենք. սակացն, այժմ ևս կրկնում ենք՝ փոքր քանակութիւնով երկու կամ մի ժամը մի ժամամ։